Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով օդորակիչների և փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13.03.2024թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան
Գ. Խաչատրյան
Մ. Արշալույսյան
Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Արամ Խաչատրյան Սասունի Ա/Ձ-ի և Մայ Մարկետ ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին համակարգի միջոցով ծանուցվել է 11.03.2024թ., առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ արվել է վերջիններիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները, Արամ Խաչատրյան Սասունի Ա/Ձ-ի և Մայ Մարկետ ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են բավարար:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Արամ Խաչատրյան Սասունի Ա/Ձ-ին,
- 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Մայ Մարկետ ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝

- 1-ին չափաբաժնի մասով Արամ Խաչատրյան Սասունի Ա/Ձ-ին,
- 2-րդ չափաբաժնի մասով Մայ Մարկետ ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Տ. Ղուկասյան
Անդամներ՝	----------	Կ. Բարսեղյան
	----------	Գ. Խաչատրյան
	----------	Մ. Արշալույսյան
	----------	Ա. Խաչատրյան
Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝	----------	Ն. Նիկոլայան